

4. Հանրապետության բնակավայրերի ջրամատակարարում

Ըստ հանրապետության բնակավայրերի ջրամատակարարումն իրականացնող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2002թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված ջրամատակարարման համակարգում ընդգրկված են եղել հանրապետության բոլոր քաղաքները և գյուղական վայրերի 36.5%-ը: Ջրմուղի ջրատարի, փողոցային ցանցի և միջքաղային ու միջբակային ցանցի միագիծ ընդհանուր երկարությունները կազմել են 4904.3, 7215.4 և 914.2 կմ, որից քաղաքային բնակավայրերում, համապատասխանաբար՝ 3556.0, 3988.3 և 914.2 կմ:

Միագիծ երկարությունն ըստ մարզերի, 2001թ.

(կմ)

	Ջրատարի	Փողոցային ցանցի	որից՝ կարիք ունեն փոխման	Միջքաղային և միջբակային ցանցի
ք.երևան	746.3	1052.5	762.3	518.6
Արագածոտն	493.0	410.0	217.2	7.0
Արարատ	367.0	1679.0	491.9	14.0
Արմավիր	519.3	618.0	272.4	15.0
Գեղարքունիք	388.7	453.2	201.8	21.0
Լոռի	559.0	689.7	293.0	74.9
Կոտայք	524.0	828.0	329.8	64.0
Շիրակ	513.0	822.0	320.4	67.0
Սյունիք	453.0	336.0	188.4	92.7
Վայոց ձոր	110.0	143.0	61.3	18.0
Տավուշ	231.0	184.0	88.2	22.0
Ընդամենը ՀՀ	4904.3	7215.4	3226.7	914.2

2001թ. ցանցին տրվել է 569.2 մլն. խոր. մ ջուր (ք.երևան՝ 406.5 մլն. խոր. մ), որից 285.0 մլն. խոր. մ-ը բարձրացվել է առաջին բարձրացման պոմպերով (ք.երևան՝ 218.1 մլն. խոր. մ), 269.2 մլն. խոր. մ-ն՝ ինքնահոսքով (ք.երևան՝ 188.4 մլն. խոր. մ), 15.0 մլն. խոր. մ-ը՝ ստացվել է այլ կազմակերպություններից: Ցանցին տրված ջրից մաքրող սարքավորումներով բաց է թողնվել 8.7 մլն. խոր. մ ջուր:


2001թ. ընթացքում սպառողներին բաց է թողնվել 196.5 մլն. խոր. մ ջուր, այդ թվում՝ իր սպառողներին՝ 182.2 մլն. խոր. մ, այլ սպառողներին՝ 14.3 մլն. խոր. մ ջուր: Իր սպառողներին բաց թողնված ջրից բնակչությանը տրվել է 152.9 մլն. խոր. մ, կոմունալ-կենցաղային օբյեկտներին՝ 5.3 մլն. խոր. մ ջուր:

Սպառողներին բաց թողնված ջրի ծավալների բաշխվածությունն ըստ մարզերի, 2001թ.


	Սպառողներին բաց թողնված ջուրը		որից՝ իր սպառողներին	% -ով իր սպառողներին տրված փաստացի ջրի ընդհանուր ծավալից		
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արդյունաբերական օբյեկտներին
ք.երևան	115.1	58.6	100.8	81.3	1.3	17.4
Արագածոտն	4.0	2.0	4.0	92.5	2.5	5.0
Արարատ	11.9	6.1	11.9	89.1	3.4	7.5
Արմավիր	11.2	5.7	11.2	93.8	2.7	3.5
Գեղարքունիք	7.3	3.7	7.3	86.3	2.7	11.0
Լոռի	9.0	4.6	9.0	91.1	4.4	4.5
Կոտայք	13.3	6.8	13.3	85.0	3.0	12.0
Շիրակ	12.1	6.2	12.1	86.0	7.4	6.6
Սյունիք	8.2	4.2	8.2	75.6	11.0	13.4

	Սպառողներին բաց թողնված ջուրը		որից՝ իր սպառողներից	% -ով իր սպառողներին տրված փաստացի ջրի ընդհանուր ծավալից		
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արդյունաբերական օբյեկտներին
Վայոց ձոր	2.0	1.0	2.0	80.0	5.0	15.0
Տավուշ	2.4	1.1	2.4	87.5	8.3	4.2
Ընդամենը ԶԶ	196.5	100.0	182.2	83.9	2.9	13.2

Բնակչությանը տրված փաստացի ջրի քանակն ըստ մարզերի, 2001թ. (%-ով ընդհանուրից)




Բնակչությանը տրված փաստացի ջրի քանակը, 1970-2001թթ., մլն. խոր. մ




2001թ. հանրապետության մեկ բնակչին բաց թողնված ջրի օրական քանակը կազմել է 110 լիտր, իսկ Երևան քաղաքում՝ 180 լիտր:

Մեկ բնակչի փաստացի սպառած խմելու ջրի միջին օրական քանակը, 1995-2001թթ., լիտր/օր



2001թ. ջրի կորուստը կազմել է ցանցին տրված ջրի ընդհանուր ծավալի 65.5%-ը, Երևան քաղաքում՝ 71.7%-ը: Ջրի կորուստների հիմնական պատճառը ջրագծերի ֆիզիկական մաշվածությունն է: 2001թ. ընթացքում ջրմուղի համակարգում արձանագրվել է 12645 վթար, որից ք.երևանում՝ 1555:

Ջրօգտագործման և ջրի կորուստների տոկոսային հարաբերակցությունն ըստ մարզերի, 2001թ.



Ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, 2001թ., մլն. դրամ

Սուտքեր ՀՀ պետական բյուջեից	277.0
Ջրի իրացումից	2517.5
որից՝ բնակչությունից	1175.4
Ծախսեր, ընդամենը	7521.0

2001թ. հանրապետությունում ջրի իրացումից ստացված փաստացի եկամուտների 46.7%-ը բնակչությունից հավաքագրվածն է:

Հանրապետությունում ջրի իրացումից տարիների ընթացքում կուտակվել է 28580.3 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 25007.6 մլն. դրամի կամ 87.5%, իսկ 2001թ.՝ 5454.8 մլն. դրամի, որից՝ բնակչությունից՝ 5244.2 մլն. դրամի կամ 96.1%: Տարիների ընթացքում ջրի իրացումից կուտակված պարտքերի 61.4%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին: 2001թ. այդ ցուցանիշը կազմել է 55.6%: